Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

ՆԵՐԲՈՂՅԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ[1]

Քանչելի է Քո ծնունդը, Որդի Աստուծո, և դժվարին է իմ բերանին՝ նվաստ լեզվով խոսել մեծ խորհուրդների վերաբերյալ: Քո հայտնությունը բարձր է բոլոր բանական էակներից, և իմ տկարության պատճառով անհնար է խոսել Քո ծննդյան մասին: Բովանդակ աշխարհը չի կարող ճառել Քո փառքը. Տեր. և արդ, ես՝ տկարս, ինչպե՞ս համարձակվեմ պատմել Քո մասին: Միայն Քո Հայրը գիտե Քո ծննդյան որպիսությունը, ու [ես]՝ հող և մոխիրս, ո՞ր բերանով խոսեմ Քո մասին: Քո Մորից իսկ ծածուկ է իբրև մարդ հայտնությունը Քո, և արդ, ո՞վ արդյոք կբարձրանա առ աստվածային ծնունդը Քո: Քեզ հավասար չէ և ոչ մեկը. բայց միայն Հայրը Քո. իսկ ես ինչպե՞ս երկարեցնեմ իմ լեզուն դեպ Քո ծածուկ խորհուրդները: Քո խորհուրդները անծանոթ են նաև հրեշտակներին. և ինչպիսի՞ ձայնով Քեզ ընծայեմ նվազ խոսքերիս պտուղը: Քո կառքին լծված Քերովբեները երբեք չիմացան Քո տեղը. և այժմ ո՞ր կողմ ընթանան իմ մտքերը՝ պատմելու Քո մասին[2]: Որտե՞ղ ճանաչեմ Քեզ, ո՞ր ծածուկ խորհրդի մեջ ես, և կամ ինչպե՞ս ճառեմ Քո մասին, քանզի անիմանալի է Քո խորհուրդը: Իմ զգայարանները ո՞ր երկիրը թողնեմ՝ որսալու Քեզ, և կամ ո՞ր սահմանը նայեմ՝ տեսնելու անտեսանելիիդ: Որչա՞փ բարձրանա միտքը՝ գտնելու անտեսանելիիդ, կամ ո՞ր շավղով ընթանա խոսքը՝ պատմելու անպատմելիիդ մասին: Ո՞ւր ես գտնվում. քերովբեական կառքո՞ւմ, թե՞ Մարիամի մեջ. Քո ծնողի մոտ, թե՞ Հովսեփի մոտ՝ Հրեաստանի երկրում, հայրական ծոցո՞ւմ, թե՞ Մարիամի հարկի ներքո, հողեղեն արգանդո՞ւմ, թե՞ շափյուղա Աթոռին, հրեղեն թևերի վրա՞, թե՞ Քո Տալիթա[3] Մոր բազուկներին: Քերովբեների ուսերի վրա՞ ես, որ Քեզ տեսնեմ այնտեղ, թե՞ Քո մեծությունը բնակվում է Սրբուհու գրկում, Քո պայծառությունը լուսափայլ էակների մե՞ջ է, թե՞ պատված ես խանձարուրի մեջ և աղքատապես դրված մսուրի մեջ: Այնտեղ, ուր չեն հասնում հրեշտակների մտքերը. բնակվում ես Էությա՞մբ, թե՞ իբրև նորածին կերակրվում ես խոնարհ ստինքներով, կառքերի սոսկալի շարժումո՞վ ես օրհնաբանվում, թե՞ Քո աղքատ Մոր գգվանքն է Քեզ հաճելի, հրեղեն երեքսրբյան լեզուներո՞վ ես սրբաբանվում, թե՞ կուսական սուրբ բերանով ես գովերգվում, բանական անիվների վրա՞ ես փառավորվում, թե՞ Դավթի դստեր ձեռքերով ես շոշափվում, անմարմին երիվարների հրեղեն կառքո՞վ ես բարձրանում, թե՞ աղքատի դստեր գրկում ես խոնարհված, անծանոթ

---

1 *Ներբողի հրատարակիչները /Ս. Եփրեմի մատենագրություն, հտ. Դ, Վենետիկ, 1836, էջ 9-34/ ծանուցում են, որ մեծանուն Ասսեմանին ինչպես այս, այնպես էլ Ստեփանոս Նախավկային նվիրված ներբողները վերագրում է Հակոբ Սրճեցուն /451-521/: Միևնույն հաներեն ձեռագրերը մասնավորաբար Ծննդյան ներբողը ավանդել են թե՝ Հակոբ Սրճեցու /Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 824, թ. 2ա-35բ, 3679, թ. 50ա, 9018, թ. 43բ-80բ/, թե՝ /ձեռագրերի մեծամասնությամբ/ Ս. Եփրեմ Ասորու /306-375/ անվամբ /ՄՄ. ձեռ. 993, թ. 12ա-16ա, 994, թ. 19բ-27բ, 996, թ. 106ա-122բ, 1520, թ. 349ա-354բ, 3791, թ. 19բ-31բ, 8030, թ. 265ա-291ա/:*

2 *Ակնարկում է Եղեկիել մարգարեի Տեսիլքում (Ժ) Աստվածությունը կրող կառքի անիվների տարընթաց շարժումը:*

3 *Երրայերեն նշանակում է՝ «աղջիկ, կույս». Մրկ. Ե 41:*

էությունների կամարների վրա, Պետություններից վե՞ր ես զվարճանում[4], թե՞ Քո մեծությունը իջել է Կապպադովկիայի այրի մեջ[5], սերովբեները մեծաձայն սրբասացությո՞ւն են առաքում առ Քեզ, թե՞ ճշմարտապես կուսական կաթ են ջամբում Քեզ: Արդ, որտե՞ղ փնտրեմ Քեզ, որ ամենուրեք ես. Եփրաթայի Բեթղեհեմո՞ւմ, թե՞ երկնքում կամ երկրի բոլոր ծագերում:

Նվաղեցի, Տեր, քանզի սքանչելի ես և Քո խոսքը՝ հարուստ, իսկ ես՝ տկար, և իմ լեզուն՝ աղքատ. ինչպե՞ս կարողանամ պատմել Քո մասին: Համակ սուրբ է Քո կոչումը, և իմ միտքը՝ խոովքի մեջ: Լույս են Քո խորհուրդները, և մութ են հոգևոր աչքերս ու չեն կարող տեսնել Քեզ: Իսկ արդ, եթե լռությունն ընտրեմ՝ չար գայթակղություն կլինի, որովհետև [այն] ծուլություն է ծնում, [բայց] համարձակվել և ասել՝ մեծ սա է, գուցե չկարողանամ: Նեղված եմ երկուսի միջև. ի՞նչ անեմ: Քեզ կտամ իմ ձայնի քնարը, շարժիր Քո մատները և Հոգուդ շնորհով արթնացրու իմ խոսքը՝ հոգևոր եղանակով պատմել Քո փառքը: Եվ քանի որ ես արժանի չեմ՝ Դու, Տեր, խոսիր ինձ Քո մասին: Ես փող եմ, և Քո շնորհը՝ ձայն, Դու ներգործիր, որպեսզի Քեզնով երգեմ Քո [փառքը]: Քո զորությամբ թող իմ միտքը թխի Քո պատմությունը և Քո պարգևներով թող երգեմ Քո ծննդյան փառքը: Առաջին ծնունդն անճառելի է հրեշտակներին իսկ. արժանացրու ինձ փառաբանել երկրորդը, որ Կույսից է: Միտքս չի համարձակվում մերձենալ [առաջինին. բայց] սրան հպվում եմ Քո սիրով խոսելու: Այն անճառելի է նույնիսկ հոգեղեն լեզուների համար, [մինչդեռ] սրա մասին բերանն իմ փափագում է խոսել, քանզի շնորհով է: Մշտնջենավորին սերովբեներն իսկ չեն համարձակվում նայել, (մինչդեռ) Նրան, որ այսօր եղավ, հովիվները մերձեցան: Թե առաջինն ինչպես եղավ, միայն Հայրը գիտե, [մինչդեռ] Սրա լինելու օրն ազդարարեց ամբողջ աշխարհն իր լրումով: Այն օտար է նույնիսկ երկնավոր դասերի համար, մինչդեռ այս մոտիկ է Արևելքի մոգերին իսկ: Առաջինն անծանոթ է Քերովբեներին, [բայց] մերձավոր է այս երկրորդը, որովհետև ողորմություն հեղեց մեր վրա: Եվ եթե այս ստուգապես հայտնի չէ քննողներին, ապա առաջինի մասին ո՞վ կհամարձակվի պատմել: Հարկավոր չէ զննել ո՛չ հայրականը (ծնունդը) և ո՛չ կուսականը, որովհետև [երկուսն էլ] զարմանալի և անպատմելի են: Առաջին ծնունդը վեր է ժամանակից, բոլորից գաղտնի է և այս վերջինը՝ քողարկված կուսական մատանիով: Առաջինի մասին տեղ չկա ո՛չ խոսելու և ո՛չ մտածելու, բայց այս երկրորդ հրաշքը ապշեցնում է դպիրներին անգամ: Արդ, լռենք հեռավորի մասին, որ չի պատմվում, և գանք մերձավորի մոտ, որ չի բացատրվում:

Եվ արդ, իմ անարժանությանն պատճառով մի արհամարհիր ինձ, որպեսզի փափագեմ, և քանի որ անկարող եմ՝ մի մերժիր ինձ, որպեսզի փառաբանեմ: Տեր, նայիր իմ կամքին՝ թե ինչպես է Քո փառքին պատրաստ, որովհետև իմ լեզուն սնոտիաբար չի պարծենում՝ պատմել Քո մասին: Եվ ինչը գեղեցկադիր պսակ չէ խոսքիս մեջ, ինձանից չէ. որովհետև ամեն տեսակ պատվական ակնեղեն, որ Քեզնից առա, ընդելուզելու եմ սրա մեջ: Եվ եթե իմ խոսքի կարգը հաճելի չէ, բայց [չէ՞ որ] Դու ես շնորհել այն՝ Քո մեծ խորհուրդը չի փոքրանա իմ նվաստ բերանի մեջ: Եթե թոթովախոս մեկը թագավորի անունը հորջորջի՝ մի՞թե կպակասի թագավորի անունը հախուռն խոսքից: Նույնպես և. եթե տգետ մեկը

---

4 *Համաձայն Ս. Դիոնիսիոս Արիսպագացու, «Պետությունները» (Եփես. Ա 21, Կողոս. Ա 16) ներկայացնում են երկնային իերաստիության ութիրապետության երրորդ եղյակի առաջին դասը.* The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R. W. Thomson, Lovanii, 1987, p. 1-53.

5 *Ցովհ. ԺԹ 13:*

ճառի Աստվածության պատմությունը, Աստվածությունը չի վնասվի նրա տգիտությունից: Եվ այժմ, Տեր, ես այս դաշինքով մերձենում եմ Քեզ՝ ոչ թե սահման դնելու Քո խոսքին, այլ սրտիս հոժարությունը հայտնելու իմ պատգամներով: Փոքրիշատե խոսենք շնորհների մասին, որ տրվեցին Ադամին: Քանզի Տերն իջավ նորոգելու ընկած և խորտակված Իր պատկերը, [ուստի] իմ խոսքերով գովության պսակներ պիտի հյուսեմ և մատուցեմ Նրան, որ հոժարեց ծնվել Կույսից մեր փրկության համար: Արքունական թագ պիտի ստեղծեմ և մատուցեմ թագավորների Թագավորին, որն Իր մեծությունը խոնարհեցրեց և իջավ աղքատների հարկի ներքո: Պիտի առնեմ իմ ձայնի պտուղը և մտնեմ նրա առջև, որ, անճառելի լույս հագած, հանձն առավ մարմին հագնել Դավթի դուստրից: Իմ խոսքի պատարագը երկրպագությամբ մատուցելու եմ Քահանայապետին, որ եկավ պատարագ լինել հանուն մեղավորներիս: Իմ լուման ընտրողությամբ պիտի բերեմ քաջ հովվապետի սեղանին, որ եկավ Գառ լինելու՝ Հորից առաքված: Իմ խոսքը պիտի իմաստասիրաբար կրկնեմ՝ պատմելու Աստուծո Բանի մասին, որ անփոփոխելի մարմին եղավ և բնակվեց մեր մեջ:

Ողորմության քուրայից քաղեց առատ գութը, որ դրոշմեց Ադամին՝ առնելու նրա մարմինը, որպեսզի վերստին նորոգի նրան: Ծնորհի անսահման ծովից դուրս եկավ վտակը՝ այն, որ ստեղծեց պատկերը, որպեսզի մաքրափայլ սրբի նրան հանցանքների աղտից: Մեծ Արքան կամեցավ առաքել Իր Որդուն՝ փրկելու այս աշխարհը չարի գերությունից և կռապաշտության մոլորությունից: Նրա գալուստից առաջ բազմացան կանխասացները և բովանդակ տիեզերքում ավետարանեցին բարի համբավը: Սպառնացին հալածողի քարոզիչները, բայց չվախեցավ նրանցից, նրա վրա արձակեցին իրենց նետերը, բայց չենթարկվեց գերության: Ողորմածը տեսնելով, որ աշխարհը տկարանում է, և թշնամին՝ զորանում, Իր Որդուն առաքեց՝ ետ բերելու ավարը գերողից: Տերը հրեշտակապետին հրամայեց հրեշտակներին պատրաստել տալ Իր ճանապարհը, որպեսզի իջնի և բնակվի Կույսի մեջ: Հորից անբաժանելին հրամայեց նրան փառքի Աթոռից և առաքեց Իր ոտքի պատվանդանի մոտ, ինչպես ասում է, թե՝ «Երկինքը Իմ Աթոռն է և երկիրը Իմ ոտքի պատվանդանը»[6]: Արդ, որտեղի՞ց դուրս եկավ կամ ո՞ւր գնաց կամ ի՞նչ հարկ կար պատգամախոս[7] լինել նրա առջև, և ի՞նչ պատճառով առաքեց Նրան. որպեսզի ոչ թե հոգեղենները փութով ընդառաջ գնան նրան և կամ հրեղենները, կիզող հուր բորբոքելով, Նրան հասնեն: Նրա ընթացքը սուր է առավել, քան Քերովբեներինը, Նրա թռիչքը արագ է առավել, քան Սերովբեներինը: Փայլակն ասպատակում է և չի հասնում Նրան, հողմը հնչում է և չի կարողանում նրանից անցնել. սուր է բնությամբ և արագ՝ ընթացքով: Եվ արդ, ինչո՞ւ իրենից առաջ ուղարկեց հրեշտակին՝ ողջունելու և ավետարանելու Կույսին Իր գալուստը. թերևս, որպեսզի չզարհուրի Օրիորդ Մայրը, երբ Մանկանը որովայնում տեսնի առանց սերմի: Եվ դարձյալ, այն պատճառով հրեշտակին ուղարկեց, որ Մարիամը հասկանա, թե Ով է բնակվում իր մեջ և կամ Ում է կրում Իր կուսությամբ:

Հրամանը հասավ հրեշտակին, և նա փութաց, որպեսզի չհապաղի գնալիս: Խոսքը, որ լսեց Գաբրիելը, ոչ ոք չիմացավ, քանզի գաղտնի ասվեց Բարձրյալի

---

6 *Գործք Է 49:*

7 *Բնագրում՝ «հրեշտակ», որ այստեղ ունի պատգամավորի կամ պատգամախոսի իմաստ:*

կողմից: Սուրբ Գրքից լսեցինք միայն առաքվելու մասին, բայց որպիսության վերաբերյալ չլսեցինք, որովհետև անհասանելի է: Բայց այս գիտենք հաստատապես, թե ինչ լսեց՝ նույնը ասաց Կույսին, և ինչ սովորեց՝ նույնը ավետարանեց Աստվածամորը: Ծառան ընդունելով մեծ Թագավորի հրովարտակը և արագորեն թռչելով երկնավորների դասերի միջով՝ քայլեց գնդերի վրայով և չշվարեց դասապետաց [ներկայությունից]: Անցավ բազմության միջից և չզարհուրեց լեգեոնների: Մեղքեց կրակը, պատռեց հողմը, ոտքի տակ առավ կայծակները, դուրս եկավ մշուշի միջով և գնաց լուսեղեն ճանապարհով: Հրեշտակներին թողեց իրենց բնակավայրում և անցավ նրանց միջով, լքեց հրեշտակներին իրենց կայաններում և բաժանվեց նրանցից: Ալանալով երկնքից՝ իջավ երկիր և հասավ Մարիամին: Ծառան տեսնելով Թագավորի Մորը՝ գլուխ խոնարհեց նրա առջև, տվեց ողջունելի հրովարտակը՝ Բարձրյալի կողմից գրված: Եվ իմաստուն բանականը սկսեց ընթերցել. «Ողջույն Քեզ, Օրհնվածդ կանանց մեջ, Տերը քեզ հետ է»[8]: Եվ աղավնին տեսնելով թագավորական թռչունին՝ խիստ երկյուղեց, որովհետև չգիտեր, թե ով է և ինչ է փնտրում կամ որտեղ է նրա բնակավայրը և կամ ով է նրան առաքողը: Այն բանից, որ ասաց, թե՝ «Տերը քեզ հետ է», իմացավ՝ ծառա է, բայց նրա Տիրոջը չգիտեր՝ ով է: Մարիամը հրեշտակին ասում է. «Ասա ինձ, ո՞վ է քո Տերը, կամ ո՞րն է Նրա աշխարհը. գուցե ուրիշ մեկի հետ շփոթեցի՞ր ինձ, քանզի անտեղյակ եմ քո Տիրոջից, ուրեմն քո խոսքերն իզուր են: Երբևէ Նրան տեսե՞լ ես և կամ ի՞նչ ես խոսել Նրա հետ, որ քեզ առաքեց ինձ մոտ: Արդյոք լսե՞լ ես Նրա ձայնը կամ թե եկել ես խաբելո՞ւ համար, ի՞նչ նպատակով ուղարկվեցիր, և կամ ինչպիսի՞ն է նրա կերպարանքը, որովհետև դու՝ սքանչելիդ, Նրան Տեր ես անվանում: Նմա՞ն է քեզ, թե՞ քեզնից առավել է. քեզ նման երևելի՞ է, թե՞ քեզնից պայծառ, քեզ պես փառավո՞ր է, թե՞ անպատմելի է Նրա փառքը: Եթե դու՝ ծառադ, լույսն ես հագել իբրև վերարկու, ապա քո Տերը համակ հուր է անմերձենալի, եթե քո տեսքը արեգակից ավելի [զորավոր] է ճառագայթում, ապա եթե արեգակը նայի քո Տիրոջը՝ կխավարի: Եթե քո փայլատակումներից ծխեց տաճարս[9], ապա քո Տերը եթե մոտենա լեռներին՝ կհալեցնի նրանց: Եթե քո ընթացքից կայծակներ են ցայտում, ապա քո Տերը կայրի ապառաժ քարերը նրանց վրա քայլելիս: Եթե, չնայած դու ծառա ես, քո պատմուճանը հուր է ցողում, ապա քո Տերը կարող է Իր զորությամբ անշիջանելի հուրը ոչնչացնել: Եթե քո ձայնն իբրև զորությունների ձայն հասավ իմ լսելիքին, ապա պարզ է՝ եթե քեզ առաքողը խոսի՝ երկիրը կդողա: Եթե քո շուրթերից որոտ է դուրս գալիս, ապա քո Տիրոջ ձայնը քարերն էլ կճեղքի: Ծառա՞ ես դու, թե՞ ծառաների տեր. մի ծածկիր ինձանից, որովհետև զարմացել եմ քո վրա: Ո՞վ է քո Տերը, ի՞նչ է Նրա անունը և ո՞ր ազգից է կամ աշխարհից. մեր գավառակի՞ցն է, թե՞ հեռավոր մեկը. ամեն ինչ ասա ինձ:

Հրեշտակը պատասխանում է. Ո՛վ սրբուհի, թող լինի քո խոսքը. Իմ Տերն անտեսանելի է, Նրա երկիրն՝ անծանոթ, և Նրա անունը՝ Սքանչելի[10]: Բարձր է մեզանից և՝ ծածուկ, առավել է մեր մտքերից և խորհուրդներից: Հայրական ծոցում

---

8 *Ղուկ. Ա 28:*

9 *Նկատի ունի իր աստը:*

10 *Տե՛ս Եսայի Թ 6:*

է և այժմ իջել է քո մեջ: Ինչո՞ւ ես քննում Նրան. ինձ անտեսանելի է, բայց քեզ՝ իր ծնողին՝ թերևս տեսանելի [դառնա]: Հեռու է մեր տոհմից, և, ինչպես ասացի, չգիտեմ Նրան: Միայն ձայնը լսեցի, բայց տեսքին հասու չեղա, լսեցի քեզ մոտ գալու մասին և ավետարանեցի. տես, ահավասիկ քեզ հետ է, Իրենից իմացիր ճշմարիտը:

Մարիամը զարմացավ հրեշտակի սքանչելի խոսքերի վրա և չցանկացավ լռել, քանզի իմաստում էր, փութաց իմաստությամբ հարցնել և հրեշտակից իմանալ ճշմարտությունը. Ո՛վ հրեշտակ, եթե չբացատրես քո խոսքերը, չեմ ընդունի՝ ինչ խոսեցիր իմ ականջներին: Հապճեպ լսող չեմ մայր Եվայի նման, որ հավատաց մի խոսքի և մահ ճաշակեց: Հարցրեց իրեն խրատ տվողին, թե ինչպե՞ս կաստվածանամ ծառի պտղով, որովհետև եթե հարցներ՝ կհաղթեր և չէր զրկվի շնորհներից: Արդ, թույլ տուր ինձ հարցնելու և մի՛ ձանձրացիր ինձանից: Օձի լուրը առավել սքանչելի չի լինի քոնից, եթե նրա բացատրությունից ավելին [ասես]: Նրա պես տղայաբարո չեմ, որ ծուղակ դարձավ իր ամուսնու համար: Եթե ճշմարտությունը չհայտնես, քեզ չեմ թողնի ազատ: Նա բնությամբ կամեցավ աստվածանալ, և ինձ ավետարանեցիր ծնել առանց ամուսնության: Անհնար է՝ լինի այդ, ինչ քեզանից լսեցի, որովհետև իմ բոլոր օրերի մեջ «տղամարդ չեմ ճանաչել»[11]: Ե՞րբ է արգանդը ծնել առանց ամուսնության և կամ այդ ե՞րբ եղավ կանանց տեսակի մեջ: Ո՞ր հողն արդյունք աճեցրեց առանց սերմի և կամ ո՞ր որթը ողկույզ տվեց առանց խնամվելու, ո՞ր ծառը պտուղներ հասցրեց առանց ջրի և կամ ո՞ր ցորենի կապոցը կալամեջ եկավ առանց հողագործի: Ո՞վ տեսավ հղիացած կին առանց տղամարդու մերձավորության և ո՞վ կլինի ծննդականների կարգում առանց զուգավորության: Ո՞վ է տեսել կույս արգանդում երեխա և կամ հղիությունից հետո ո՞վ է պահել կնիքը: Եթե չբացատրես՝ ինձ համար դժվար կլինի հավատալ:

Երբ հրեշտակը լսեց խորունկ հարցումներն [այս], խիստ զարմացավ և ասաց՝ ինչ լինելու էր: Հանճարեղ դպիրը նայելով կույսին, որ հոժարությամբ էր լսում ճշմարտության մասին, պատրաստվեց բացատրել իսկությունը: Տեսնելով, որ նա անվեհեր է [իր] պատասխանների մեջ՝ սրեց հրեղեն լեզուն՝ պատմելու օգտակարը. Մի կարծիր, թե խաբում եմ քեզ, դուստր Դավթի. ճշմարիտ են իմ պատգամները, ընդունիր իմ խոսքերը ընտրողաբար: Ոչ թե նենգամիտ պատգամաբեր եմ, որ կասկածում ես ինձ, հավատա ինձ՝ իմ խոսքերը ուղիղ են: Օձի նման չեմ, որ խաբեց քո մորը եդեմում: Եթե ուշ դնես խոսքիս զորությանը, [այն] քեզ կուսուցանի: Ոչ թե քեզ խաբում եմ՝ [դրդելով] Աստվածությունը հափշտակել, այլ իմ Տիրոջն եմ փառաբանում և Նրա ողջույնը պարգևում քեզ: Ոչ թե օձի նման իմ Տիրոջն եմ չարախոսում քեզ մոտ և ոչ էլ լույսից եմ զրկում քեզ, ինչպես դրախտում [էր]: Ոչ թե անարգ տերևից զգեստ եմ հագցնում քեզ, այլ անապական զգեստ բերում, որպեսզի հագցնես քո հորը՝ Ադամին: Իմ Տերը ճշմարիտ է, և ես ճշմարտությունն եմ քարոզում քեզ: Եվ քանի որ հարցրեցիր, թե՝ «ինչպե՞ս կլինի», լսիր և իմացիր. «Ճշմարտապես Սուրբ Հոգին կգա քո վրա և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ»[12]: Մանուկների ստեղծիչն Իր մարմինը գոյացնում է քո մեջ ու զգեստավորվում, և Անծին [Էությանն] Որդին ծնվում է քո կուսությունից: Աշխարհի ճարտարապետը իջնելով քո սուրբ արգանդը՝ քո որովայնի ոստայնի մեջ հյուսում է իր հողեղեն հանդերձը և զգեստավորվում: Բարձրյալի

---

11 *Դուկ. Ա 34:*
12 *Դուկ. Ա 35:*

Զորությունը մարմնանում է քեզնից և չի փոփոխվում, և քո սրբությունից թանձրանում է անեղ Բանը և մարդանում: Քո մաքուր բովի մեջ ձուլում և դրոշմում է Ադամի պատկերը, և ամենակալ Աստվածը խոնարհվում է՝ քեզնից ծնվել: [Ադամորդու] նկարագիրը, որ եղծեց չարը, նորոգում և միավորում է Իր էությանը և նրանով փրկագնում աշխարհը բոնավորի ծառայությունից: Անժամանակը սկսվում է քո որովայնում և մարդկորեն մարմնանալով աշխարհ է գալիս: Ահավասիկ բնակվում է քո մեջ և բաժանված չէ Հորից, եկել է քեզ մոտ, և Նրանով է լեցուն երկինքն ու երկիրը: Հարկ չէ քեզ մերձավորվել և հետո հղիանալ, որովհետև այդ սահմանված ամուսնություն է, որ [արդեն] քո մեջ է: Չպետք է մտնես հաղորդակցության մեջ և հետո մայր դառնաս, որովհետև քո Որդին այն հաղորդությունը լծեց բոլոր տոհմերին: Քեզ չի մերձենա տղամարդ՝ նրանից պտղաբերվելու [համար], որովհետև քո կուսության պտուղը Բարձրյալի զորությունն է: Քո կուսության կնիքը չի եղծվի, որովհետև լուսափայլ ճառագայթ է ծագում և բնակվում քո մեջ: Քո մտքից արտաքսիր մարմնական խորհուրդները, որովհետև քո Մանուկը Աստուծո Որդի է, և այլևս մի քննիր և մի խորհիր, թե՝ ինչպե՞ս, ո՞ւր և ինչո՞ւ համար, քանզի Հորից ծնվածը անքննելի և անհասանելի է: Եվ որպեսզի հայտնապես հավատաս իմ խոսքին, քեզ հրաշք ցույց կտամ՝ ի հաստատություն քո սրտի: Ահավասիկ քո ազգական Եղիսաբեթը, որ ծեր ու ամուլ է, հղի է, և իր օրերի վախճանին մանուկ պիտի ծնի, և այս վեցերորդ ամիսն է ամուլ կոչվածի, որպեսզի ամենայն ինչի մեջ չտկարանա Աստուծո գործը: Եվ նա կվկայի իմ խոսքերը, քանզի Աստուծո համար ամեն ինչ դյուրին է: Եթե չորացած ամուլ որթը պտուղ է տալիս, ինչո՞ւ պիտի անհնարին լինի քո կուսությանը հղիանալ: Անքննելի է քո զավակը ու ենթակա չէ զննության, և Նրան այլ կերպ չի կարելի փնտրել, բայց միայն՝ սիրով: Եվ երբ ուղարկվեցի՝ նրա ավետիսը բերել, չհամարձակվեցի հետազոտել, այլ ինչ լսեցի Նրանից, առանց հակառակության ավետարանեցի քեզ: Չհամարձակվեցի հարցնել, թե ինչո՞ւ կամ ինչպե՞ս, այլ լռությամբ ընդունեցի Ահավորի հրամանը:

Տեսեք, ընտրողներ, քանզի կան հարցումներ, որ օգտակար են, և կան հարցումներ, որ չարիք են պատճառում: Կա մեկը, որ քննում և չի նվազում, որովհետև ճշմարիտ է, և կա մեկը, որ քննում է, և նրա գործը հանգեցնում է տարակուսանքի: Հարցումների միտքը երկու պատկեր ունի. մեկը՝ սիրո, և մյուսը՝ հակառակության: Մարիամը, որ սիրով հարցրեց, չմեղադրվեց, որովհետև կամեցավ իմաստությամբ իմանալ ճշմարտությունը, և Զաքարիան քանի որ երկմտությամբ հարցրեց, դատապարտություն ընդունեց պապանձումով: Երկուսն էլ միևնույնը հարցրեցին նույն Վարդապետին, բայց երկուսին նույն պատասխանը չտվեց: Հրեշտակը դատապարտեց քահանային, որովհետև սա ասաց, թե՝ «Ինչպե՞ս իմանամ այդ»[13], և Կույսին շնորհեց բացատրության պսակը՝ առանց մեղադրանքի: Եվ դարձյալ Թովմասը, որ չհավատաց, դրվատվեց նրա հավատքը, քանզի նրա անհավատության որովայնը ճշմարտություն ծնեց: Եվան, որ չերկմտեց՝ մահ ճաշակեց, որովհետև հարցրեց, բայց չքննեց, հավատաց, բայց չհարցրեց, [ուստի] կործանվեց: Մերունի Զաքարիան համարացավ, որովհետև հարցրեց. քանզի տեղ կա, որ հարկ չէ հարցնել: Մարիամը, որ քննեց, արգելեց հերձվածողներին՝ հարցաքննել, որովհետև եթե ինքը չհետախուզեր, բազում գայթակղություններ կլինեին աշխարհում իր Զավակի պատճառով: Երբ «Տերը քեզ հետ է» [խոսքը] լսելուց [հետո] լռեր, հայհոյանքներն իբրև ծովի ալիք կխեղդեին այս

13 *Դուկ. Ա 18:*

աշխարհը: Եվ եթե հրեշտակը հայտնապես մեկնաբանեց, ու [այսուհանդերձ] տակավին բազում են գայթակղությունները, ապա եթե Կույսը չհարցներ, և հրեշտակն էլ չբացատրեր, ինչե՞ր չէին կատարվի:

Կանանց մեջ օրհնված է Մարիամը, որ քննեց ճշմարտությունը և հրեշտակից իմացավ կատարյալ իսկությունը: Առանց հարցումի լռում է պատասխանը և առանց քննողի չի հայտնվում բացատրությունը: Երբ հարցրեց, թե՝ «Ինչպե՞ս կլինի այդ ինձ», լսեց, թե՝ «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ»: Եվ արդ, եթե Սուրբ Հոգին և Բարձրյալի զորությունը բնակվեց Կույսի մեջ, ո՞վ կհամարձակվի նրան կրտսեր ասել Հորից, քանզի Բարձրյալի զորությունը սիրելի Որդին է, և Ինքն իսկապես Աստուծո իմաստությունն ու բազուկն է[14]: Ո՞վ կներբողի ճշմարտությունը Գաբրիելից առավել և կամ հրեշտակապետի նման ո՞վ կկշռի իսկությունը խոսքով: Ո՞վ էր հրեշտակի նման տեղյակ գաղտնի խորհուրդներին, ո՞վ էր լողանում կայծակների խորքում, եթե ոչ՝ հրեղեն [էակը]: Ո՞վ կարող էր պատմել Աստուծո Որդու մասին, ինչպես Իր պատգամավորը, և կամ ո՞վ էր հավատարիմ իր Հոր սպասավորի նման: Եթե նրան [որպես] իր խորհրդակիցը ներկայացրեց, թե՝ «Բարձրյալի զորությունն» է, և [այսուհանդերձ] տակավին ոմանք հանդգնեցին նվաստացնել Նրա ծնունդը, ապա ինչպիսի՜ չարիք ասես չէին գործի հերետիկոսները, եթե լռեր: Տես, Մարիամի հարցումները որքան բարի են, քանզի եթե լռեր, այնպիսի ճշմարտություն չէր ծագի աշխարհի վրա: Հարցրեց, իմացավ, և այնուհետև չթերացավ: Մաքրեց զգայարանները և սրբագործեց հարցնողների բերանները, կնքեց խոսքերը, որպեսզի և ոչ մեկը չքննի անքննելին: Իր սրտից արտաքսեց ամեն տեսակ խորհուրդները և իր սենյակը սիրով ցողեց սրբի առջև: Իր տունը լցրեց սրբությամբ ու առաքինությամբ և նրա պատերը զարդարեց արդարության գործերով: Խոնարհությամբ նրան կապեց լուսավոր մարգարիտներ, հեզությամբ՝ զանազան ակնեղեն, և լռությամբ՝ անուշահոտ ծաղիկներ: Կուսական պատմուճանով հանդարտեցրեց արքունական աշխարհը և նրա վրա սփռեց ճշմարտության պայծառ հանդերձները: Իր լապտերի մեջ լցրեց ողորմածության գովելի ձեթը և լուսավորեց իր տաճարը աստվածային իմաստությամբ: Ջերմ հավատով վառեց իր բուրվառը և իր աղոթքը բուրեց անուշահոտություն: Նրա մեջ դրեց խունկ՝ օրհնության ընդունելի ձայն, և իր տաճարից անդադար բարձրացավ փառաբանության հնչյունը:

Մեծ Թագավորից դուրս եկավ հրամանը, և նրանից հետո Թագավորի Որդին մտավ լսելիքի դռներից ներս: Երբ Կույսը հրեշտակին ասաց, թե՝ «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ»[15], խոսքը պարգևեց և Մանուկին ընդունեց իր ծոցի մեջ: Այնպես չէ, ինչպես ասում են ոմանք, թե հրեշտակի գալուց առաջ իջավ Կույսի մեջ, բայց եթե նույնիսկ այդպես էլ լիներ, զարմանալի չէր լինի: Բայց հարկ էր նախ ավետարանել Կույսին և նրա բարի կամքով և սուրբ ազատությամբ ընդունել Նրան: Աստուծո համար պարծանք չէր հրեշտակին կանխել, այլ գովելին այն էր, որ խոնարհությամբ լիներ Նրա գալուստը: Ինչպես Մովսեսը, որ ժողովրդին լուր բերեց, թե՝ իջնում է

---

14 *Դուկ. Ա 51, Ա Կորնթ. Ա 24:*

15 *Դուկ. Ա 38:*

Բարձրյալը, և երբ ծերերն ու Մովսեսը սրբվեցին, այնժամ Բարձրյալը իջավ Սինա լեռան վրա[16], [ճիշտ] այդպես էլ Գաբրիելը ավետեց, և նա մաքրվեց Սուրբ Հոգով և աստվածաբնակ տաճար եղավ: Մարիամի մեջ ծագեց լուսափայլ ճառագայթը, բայց չբաժանվեց Հոր էությունից: Իջավ և բնակվեց անարատ սրբուհու մեջ, բայց [շարունակվեց] փառավորվել Հոր աջ կողմում, բարձունքներում: Մտավ հողեղեն արգանդի մեջ, բայց երկինքը լի է Նրա փառքով, [մտավ] Կույսի ծոցը, [բայց] և՝ քերովբեական կառք, ամբողջապես՝ Մարիամի հետ, [բայց] և ամբողջապես Իր Հոր հետ և բոլորի հետ: Նստած է Քերովբեների վրա, [բայց] և հագել է մարմին, և [միաժամանակ] գտնվում է բոլոր սահմաններում: Երկնային դասերը զարհուրում են, [վերին] բազմությունները՝ հիանում, Զորությունները՝ սքանչանում, բանակները՝ դողում, գնդերը՝ գոչում, հրեշտակները՝ բարբառում, Քերովբեները՝ օրհնում, սրբասաց Սերովբեները՝ վերառաքում փառաբանություն Նրա մեծությանը, բայց Ինքը բնակվում է Կույսի որովայնում, որին հոժարեց երկրորդ երկինք դարձնել երկրի վրա: Նա, որ Իր ձեռքով բռնելով աշխարհի սանձը, կառավարում է այն, Մանուկ եղավ Կույսի մարմնեղեն արգանդում: Բովանդակ երկիրը չափել է քլով[17], [բայց] և այն տեղավորել Մարիամի փոքրիկ ծոցում: Նրա իշխանությունը սփռված է երկնքում և երկրում, բայց Ինքը բազմել է Իր աղախնի և Իր Մոր արգանդում: Ինքն է արարում մարդկանց պատկերը կանանց որովայնում և նույն Ինքն է, որ նկարում է Իր մարդեղության պատկերը: Ինքն է ձուլում բանական էակների անձերը էգերի որովայնում և նույն Ինքն է նյութագործում Իր մարմինը Մարիամի մեջ ու Իրեն միավորում և Կույսից առնելով դրոշմում Իր անձի անդամներին և զգայարաններին: Կենդանություն է փչում բոլոր մարմինների մեջ և նույն Ինքը մարդկային ցեղից շնչավոր մարմին դառնում:

Սրբուհու միտքը և խորհուրդները լուսավորվեցին Աստվածորդու միջոցով, որ կրում է իր մեջ: Պայծառացավ և փայլեց նրա գեղեցկությունը, ցնծաց և ուրախացավ արքաների Տիրոջ համար, որ բնակվում էր նրա մեջ: Եվ է՛լ ավելի էր զարմանում, զարհուրում, ամաչում, երկնչում և դարձյալ քաջալերվում, ուրախանում, փառավորվում, պայծառանում: Գնաց Եղիսաբեթի մոտ և ողջունեց ամուլին իր տան մեջ: Կրելով խաշների Տիրոջը՝ Կույսը եկավ տեսնելու ամուլ ոչխարին, որ պատրաստվում էր ծնել գեղեցիկ գառնուկին: Ամբիծ աղավնին Հոգու զորությամբ թևերով թռչելով հասավ Հուդայի քաղաքը՝ տեսնելու արծվի ծեր ձագին և ուրախանալու նրա հետ: Եղբիկն ընթացավ տեսնելու ամուլին, որ կրում էր գեղեցիկ եղջերուին, և գնաց տեսնելու Ահարոնի դստեր[18] մանուկ որթին: Նստած Իր փառքի կառքին Թագավորը գնաց տեսնելու և ողորմածությամբ ողջունելու Իր ծառային: Աստվածաբնակ տաճարը հետիոտն գնաց, որպեսզի լուսավորի աղքատի որդուն՝ նախակարապետին, իր հոր տան մեջ: Եվ երբ ծառան տեսավ Թագավորին [այդքան] մոտիկ, խիստ վախեցավ և դողալով երկրպագեց Նրան: Փայլեց Արարչի զորությունը, և Մանուկը խաղաց որովայնում ու խայտաց, ցնծաց

---

16 *Տե՛ս Եղ ԺԹ 18-20:*

17 *Հմմտ. Եսայի Խ 12 (քիլ = բուռ մատի և ցուցամատի բացվածքի չափը):*

18 *Նկատի ունի Հովհաննես Մկրտչի մորը՝ Եղիսաբեթին. Ղուկ. Ա 5-25, 36, 39-80:*

իր մոր արգանդում[19]: Ծածուկ կերպով գոչեց Աստուծի Կորյունը[20], որի մասին խոսեց Հակոբը, և դևտացի որթը[21] երկյուղեց Նրա ձայնից: Ուրախությամբ խայտում էր Մանուկը Թագավորի Որդու առջև, ինչպես խայտում էր Նրա հայրը՝ Դավիթը, Տապանակի առջև: Նեղեց իր մորը՝ փութով դուրս գալ [լույս աշխարհ] և երկրպագել Թագավորին և Նրա Մորը: Այնժամ Եղիսաբեթին պարգևեց Սուրբ Հոգու շնորհներ՝ քարոզելու և Իր Մորը հայտնելու ճշմարտությունը: Մարգարեության մատը շարժվեց Ահարոնի դստեր քնարի վրա, և սկսեց մեծ ձայնով երգել ապագայի մասին. «Որտեղի՞ց ինձ այս, որ իմ Տիրոջ Մայրը ինձ մոտ գա»[22], և [որտեղի՞ց] Հզորի Որդուդ՝ գալ աղքատների որդիների մոտ: Որչափ երանի է ինձ, քանզի տեսա քեզ՝ երանելիիդ՝ նոր երկնքիդ, որ երկրի վրա եղար և եկար ինձ մոտ: Քեզանից նվաղ է քերովբեական կառքը, որովհետև նա [լոկ] նմանությամբ կրեց քո Որդուն, և դու՝ ճշմարտությամբ: Քո զգայարաններն առավել պայծառ են, քան բոցեղեն անիվները, որովհետև Նա, որ բնակվում է քո մեջ, ինքնին շարժում է նրանց և վարում: Սինայական լեռան ամպից և մեգից ավելի անավոր ես, քանզի անավասիկ քո մեջ է իջել Այն, որ Էր և Է, ինչպես Մովսեսն ասաց[23]: Ահա երբ քո ողջույնի ձայնը հասավ իմ ականջին, ցնծալով խաղաց մանուկս իմ որովայնում և շատ նեղեց ինձ՝ դուրս գալ, եթե քո Որդու զորությունը չարգելեր ինձ: Խիստ ուրախացավ Մարիամը, որովհետև ամուլն էլ վկայեց իր հղիությունը: Մարիամը նրա մոտ մնաց գրեթե երեք ամիս:

«Ու Եղիսաբեթի»՝ ճշմարտության քարոզիչին «ծննդաբերելու ժամանակը լրացավ»: Եկավ-ընկավ Մարիամի առջև, աղաչեց նրան և ասաց. Եկար ողջունով, գնա խաղաղությամբ, մեծ Թագավորի Մայր, քանզի պատշաճ չէ Արքային՝ պաշտել ծառային: Բարի չէ ծառային բազմել և Տիրոջը՝ նրա առջև կանգնել, անկարելի է կրակին ծառայել չոր ճյուղերին: Արի, առ և գնա արդարության Արեգակիդ հետ, որովհետև եթե Դրան տեսնի իմ փոքր ճրագը, կնվաղի Դրա լույսից:

Թագավորը վերադարձավ ծառայի տնից և եկավ Իր Մոր տուն: Կույսը, որ կրում էր բազմօրյա Մանկանը, եկավ Հովսեփի մոտ: Նրան տեսնելով Հովսեփ արդարը շատ զարմացավ: Նայում էր նրա հեզությանը, ամոթխածությանը և մեծապես զարմանում հղիության վրա: Գիտեր, որ սուրբ էր անձով և մաքուր՝ սրտով, և չգիտեր, թե ինչ անի, որովհետև Մանուկը խաղում էր նրա որովայնում: Պայծառ էր տեսքով և պարկեշտ՝ կերպարանքով, և քանի որ կրում էր Մանկանը՝ արդարը չէր հանդարտվում: Տեսնում էր նրա առաքինության հրաշալի վարքը և երկյուղում, նայում էր հղությանը և հուզվում: Եվ ինչքան Հովսեփը ողջախոհ էր գտնվում և անտեսում կատարված բաները, այնքան որովայնն ինքնին աղաղակում էր Մանկան մասին: Եվ ինչքան նա կամենում էր պահել գաղտնիքը, որպեսզի չհանդիմանվի, բայց տեսնում էլ այլոց, որ ակնարկում էին մեկմեկու [կատարվածի մասին]: Եվ ինչքան խորհում էր չհանդիմանել սրբությունն, տեսնում

---

19 *Ղուկ. Ա 41:*

20 *Մանդ. ԻԹ 9. ակնարկում է Հիսուս Քրիստոսին::*

21 *Նկատի ունի Հովհաննես Մկրտչին, որ զավակն էր դևտական դասի շառավիղ Զաքարիա քահանայի:*

22 *Ղուկ. Ա 43:*

23 *Տե՛ս Ելք Գ 14:*

էր շատերին, որ մատնացույց էին անում նրան: Հովսեփը նեղված էր Մարիամի հղության պատճառով և երկյուղում էր սրբության մասին խոսել ու չէր համբերում լռել: Եկավ հեզությամբ և սկսեց խոնարհությամբ խոսել. Ասա ինձ, Տալիթա, ի՞նչ է անգիտությամբ [կատարված] քո հանցանքը, երևելի նավ, ո՞ւր ընկղմվեց քո արագընթաց շարժումը, և կամ ո՞ր ծովը խորասույզ արեց քո ծանրագին վաճառականությունը: Ամբիծ աղավնի, ո՞վ կտրեց քո գեղեցիկ թևերը, և կամ ո՞վ փետտեց քո մանկության ծաղկագույն փետուրները: Հեզ և խոնարհ դու ծով, ո՞վ գողացավ քո մարգարիտները, և կամ ո՞ր ավազակը հափշտակեց քո մատանիների կնիքը: Ամուր քաղաք, ո՞վ կործանեց քո պարիսպը և քո զորքերը գերեվարեց օտարների մոտ: Բարի հող, ո՞վ սերմանեց քո մեջ նենգության սերմը, քանզի այդ ցորենի խուրձը մեզանից չէ:

Պատասխան տվեց Մարիամը և ասաց. Քեզ բավ է այդ, Հովսեփ, կատարիր քո խոսքը, իմ Տերը վկա է, որ այդ ամենի մեջ չեմ սխալվել: Մարգարիտը պահված է իմ մեջ և չի գողացված, մատանիները կնքված են, և ոչ ոք չի ավերել դրանք: Ոչ ոք չի վերցրել պայծառ մարգարիտը, որ խոստացված է քեզ: Կոտրված չէ պատվական քարը, որ ավանդված է քեզ: Իմ օրիորդության պսակը հաստատուն է իմ մեջ, և կողոպտված չէ մեծագին զարդը: Հովսեփը ասում է. Մինչև այժմ ճշմարիտ էիր, և քո սրբության մասին ես վկայում էի բոլոր մարդկանց և հարաժամ ուրախանում քո ճշմարտության մեջ, և հավատի գիտեի, որ ստախոս չէիր: Բայց այժմ ինձ անհնարին է հավատալ քո խոսքերին, որովհետև խոսքից առավել գործերն են ընդունելի: Ինչպե՞ս ընդունեմ քո շինծու զրույցը, որովհետև ստուգապես տեսնում եմ Մանկանը քո ծոցում: Ստությունը տեսապես կցորդակից է պոռնկությանը և խաբեությունը՝ լծակից գողությանը: Ով շնանում է, թեկուզ և երդվի, ճշմարիտ չէ, որովհետև մի չարիքը կարող է բազում [չարիք] ծնել: Քո խոսքե՞րը լսեմ, թե՞ հաստատուն գործերիդ հավատամ: Կույսը պատասխանում և ասում է. Իմ խոսքերի մասին վկայում է կուսությունս. որով հղի եմ, ոչ ինձանից է և ոչ քեզանից: Եվ ճշմարիտ է, որ տղամարդու չեմ մոտեցել, և ամուսնություն երբեք չեմ տեսել, հավատա ինձ:Եվ եթե ինձ սուտ ես համարում մեր ազգի մեջ իմաստուն կանայք կան. մի՞թե միայն ես ունեմ կանանց դասի կուսության կնիքը: Եվ դարձյալ տուր ինձ ըմպել Փորձության ջուրը, համաձայն Մովսեսի սահմանումի[24]: Արդ, քեզ ավելի հավատարիմ ի՞նչ վկա բերեմ, քան կուսությունն ու փորձության ջուրը: Եվ եթե ինձ ու նրանց սուտ ես համարում, իմ Որդին, որ Բարձրյալի զորությունն է, վկայում է, որ տղամարդ չեմ ճանաչում: Հովսեփը ասում է. Ո՞վ կարող է հավատալ այդպիսի խոսքերի, քանզի դրան նմանվող օրինակ չկա: Ո՞վ է տեսել կուսությունն ու մանկանը նույն որովայնում, և կամ ո՞վ է լսել լցված ստինքի և մատանիների կնիքների միևնույն մարմնի մեջ [լինելը]: Հավիտենությունից ի վեր այդ չի եղել կանանց տեսակի մեջ, որ կույսը հղանա առանց տղամարդու: Ինձ դժվար է հավատալ այդ նոր և օտար գործին, որի մասին ո՛չ բնությունն է վկայում և ո՛չ էլ Գրքերը:

---

24 *Նկատի ունի Մովսես նախամարգարեի զավազանի հարվածով Քորեբի ժայռից բխած ջուրը: Մովսեսն այդ «վայրը կոչեց» Փորձություն և Մեղադրանք, որովհետև իսրայելացիները մեղադրել էին և Տիրոջը փորձել՝ ասելով. «Տերը մեր մե՞ջ է, թե՞ ոչ». Ելք. ԺԷ 7:*

Միարիամը ասում է. Եթե իմ խոսքերի վկայությունն ես ցանկանում, դյուրությամբ կիմանաս Գրքերից և բնությունից: Ո՞վ ամուսնացավ կույս հողի հետ, որ ծնեց Ադամին, և ինքը՝ Ադամը, ո՞ւմ մերձավորությամբ ծնեց Եվային: Ո՞վ ամուսնացավ ծառի հետ, որ ծնեց խոյին[25], և կամ ո՞վ մերձեցավ ժայռին, որից ջուր բխեց[26]: Ո՞ր հողը հղիացրեց գավազանը Տապանակում[27], և կամ ո՞ւմ զորությամբ ջուր բխեց էշի ծնոտից[28]: Ո՞վ սերմանեց այսքան և այսպիսի զավակներ որովայններում, որ դու միայն իմն ես անհնարին համարում: Եվ եթե բնությանը չես հավատում, որ ճշմարիտ է, լսիր սուրբ գրքերին և հոգեշունչ մարգարեներին: Դու չե՞ս կարդացել, ինչ է ասում Եսային. «Ահա Կույսը հղանալու և ծնելու է Էմմանուելին»[29]: Այս մարգարեն քեզ ճշմարի՞տ է թվում, թե՞ սուտ, արդյոք հավատարի՞մ, թե՞ ուրիշ երկմտություն կա քո սրտում:

Հովսեփը ասում է. Երկու դեպքում էլ մեծ ահ է ինձ և ստուգապես հարկ է ինձ փախչել քեզանից: Քանզի եթե քո Մանուկը ամուսնությունից է, ապա քավ լիցի ինձ իմ սրբությունը միավորել այդ անձին, որ օտարի է մերձեցել, և եթե Սուրբ Հոգուց է, նույնպես արժանի չեմ բնակվել քեզ մոտ: Եվ այլևս չեմ քննելու, թե ով է կամ որտեղից, որովհետև սրանից հետո ինձ հարկ է այդ կատարել: Հովսեփը այս ասաց և լռեց, որովհետև խորհում էր արձակել Մարիամին: Եվ նա խիստ վշտացավ նրա տրտմության պատճառով, և մայրաբար աղաչեց իր Որդուն և աղոթեց Նրան որպես Աստուծո, աղախնապես հառաչեց ու նրանից ծնողաբար խնդրեց, գաղտնորեն հայցեց նրանից, սիրով խոսեց նրա հետ, մտքում իմաստությամբ խորհեց, որ իր բովանդակ հույսը Որդին է: Ո՛վ ճշմարիտ Որդի իմ և Հոր Խոսք, որի պատճառով բազմիցս զրպարտվեցի, ծագեցրու Քո լույսը և լուսավորիր Հովսեփի մտքի խավարը: Քանի որ նա քեզ [համար] հայր անվանվեց, համաձայն երկրային կարծիքի, [ուստի] նրան հայտնիր Քո Մոր ճշմարտությունը: Գթա, ողորմած, հանուն նրա արդարության և ամբծության, և Քո աստվածային հայտնությունից նրան մի օտարացրու, Քո խորհուրդները մի թաքցրու նրանից, որպեսզի չկորչի, այլ նրան ճանաչել տուր Քո հայտնությունը և ուրախացրու նրան, որպեսզի մոռանա իր տրտմությունը: Եվ քանի որ ես արժանի եղա խոսել Քո մեծությունը կրելու մասին, մի թող նրան խեղդվել հերձվածների ալիքներում, այլ հանդարտեցրու նրան Քո հուսալից հավատքով: Տեր իմ, եղիր Քո Մոր վկան, քանզի շատ զրպարտեցին ինձ, և Հովսեփին հավատացրու, որպեսզի նա շատերին հավատացնի:

Եվ մինչ այդպիսի մտքերի պատճառով Հովսեփը տագնապում էր, արդարը քնեց և իր անկողնում հանգչեց:

Այնժամ Կույսի Որդին հրամայեց հրեշտակներին՝ հասնել նրան: Իջավ պատգամախոսը, որ բերեց Թագավորի Մոր ավետիսը՝ Հովսեփ աստվածահորը հայտնելու գաղտնիքը: Հոգեղեն [պատգամախոսը] թռավ և փութով հասավ, որպեսզի երկբայական մտքերը կորզի նրա սրտից գիշերվա տեսիլքով: Նրան

25 *Տե՛ս Ծննդ. ԻԲ 13:*
26 *Տե՛ս Ելք ԺԷ 6:*
27 *Տե՛ս Թիւք ԺԷ 8:*
28 *Տե՛ս Դատ. ԺԵ 19:*
29 *Եսայի Է 14:*

երևաց աճավոր փառքով, որպեսզի երկյուղից ստուգապես ընկալի Նրա խոսքերը: Ճնչեց իբրև քամի, ցոլացավ իբրև փայլակ, կայծակներ թափեց իր թևերից, ծագեց իբրև արեգակ և տունը լցրեց իր շողով, փայլեց հրաշալի լույսը և սարսափեցրեց Հովսեփին: Սկսեց խոսել և ասել Նրան. «Մի երկյուղիր, Հովսեփ, որդի Դավթի»[30]: Խոսքի սկզբում մխիթարեց Նրան, որովհետև Դավթի որդին էր, և տեղյակ պահեց Նրան, թե Դավթի տնից է ծագում Արքան, որին ակնարկեց Հակոբը[31]: Եվ եթե քեզ հետ նշանված Մարիամը Ռուբենի կամ Շմավոնի և կամ Ղևիի ցեղից է, հայտնի է, որ դրանից չի ծնվելու Իշխանը, որ գալու է, բայց եթե Նրա տոհմը Հուդայից և Դավթից է, ճշմարտապես Նրանից է ծագելու, Նրանից, որ Տերն է թագավորությունների: «Արդ, դու մի երկյուղիր՝ քեզ մոտ առնել Մարիամին, որովհետև Նրանից ծնվածը Բարձրյալի Որդի պիտի կոչվի»[32], պոռնկությունից չէ, ինչպես կարծեցիք, որովհետև Նրա Որդին վերացրել է այս աշխարհի պոռնկությունը: Այս է, որ գրեց Եսայի մարգարեն. «Ահա կույսը հղիանալու է և ծնելու Որդի և Նրա անունը կոչելու են Էմմանվել, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ»[33]: Եվ եթե այս չլիներ, սուտ էր Եսայա մարգարեությունը: Ահավասիկ Աստված խառնվեց մարդկանց հետ, ինչպես գրված է. «Հորից ելա և աշխարհ եկա»[34]: Եվ այս ասելով՝ հրեշտակը գնաց:

Եվ Հովսեփը արթնանալով՝ ահով է բռնվում, դողալով, ապշելով, զարմանալով և փութով գլուխը խոնարհելով՝ երկրպագում Կույսին ու խոստովանում, փառաբանում և ասում. Ողջույն քեզ, սրբուհի, Մայր մեծ Թագավորի, երկրպագում եմ Քեզ, որովհետև եղար կրողը տերերի Տիրոջ, որ բնակվում է քո մեջ: Ստուգապես Տերն է հրեշտակների, և Նրան են ծառայում հրեղեն դասերը, և Ինքն է Արարիչը բոլոր հոգեղեն էակների: Եվ կարծում եմ, թե չգիտես Նրա զորության մասին, որովհետև ծածկվում է քեզանից, բայց ես Նրա մերձակա ծառայից՝ հրեշտակից իմացա Նրա մեծությունը: Եվ արդ, հիմա, երբ ճանաչեցի, չեմ դադարելու փառաբանել և քարոզել Նրա ճշմարտությունը զրպարտողներին: Եվ փոխանակ քո հղության վրա իմ կասկածանքի, այլևս Նրա սիրուց ինձ չի զատի ո՛չ կրակը, ո՛չ սուրը և ո՛չ մահը: Եվ քանի որ կամենում էի քեզ արձակել իբրև մահապարտ, քավ լիցի ինձ թողնել քո սրբությունը մինչև մահ, այլ իբրև աստվածաբնակ տաճար ուրախությամբ և սրբությամբ պիտի ծառայեմ քո մեծությանը:

Հովսեփն ընդունեց Մարիամին, և բնակվում էր՝ սրբին պահպանելով. հնազանդվում, հոժարում, պատվում, երկրպագում, փառաբանում, սպասավորում, երկյուղում և Նրան լսում մեծ ահով: Սուրբ էր անձով և մաքուր՝ սրտով ու մտքով: Աշխարհի ճարտարապետի համար հյուսնը[35] մարմնավոր քերովբե եղավ: Թևերով քողարկվելով, Սերովբեները Նրան սրբասաց փառաբանություն են երգում, և Կույսը Նրան կրում է [իր] աղքատ հարկի ներքո՝ իբրև սովորական մի մանուկ:

---

30 *Մտթ. Ա 20::*
31 *Տե՛ս Ծննդ. խթ 9:*
32 *Մտթ. Ա 20::*
33 *Եսայի Է 14:*
34 *Յովհ. ԺԶ 28:*
35 *Հովսեփը հյուսն էր. Մտթ. ԺԳ 55, Մրկ. Զ 3:*

Երկինքը դժվարանում է իր մեջ տեղավորել Նրա մեծությունը, և աղքատների դուստրը Նրան տեղավորում է իր ծոցում: Եվ նա, ում հրամանով սնվում են բոլոր մանուկներն իրենց մայրերի որովայններում, սնվում է Կույսի արգանդում:

Իսկ երբ լրացավ Իր մարդեղության ժամանակի սահմանը, և Իր անձնավորության մեջ հաստատվեց անդամների կապակցումը, մարմինը լրվեց բանավոր զգայարաններով, պատկերը նկարվեց Իր իմաստությամբ և մարմինը, որ վերցրել էր Կույսից, միավորեց Իր Աստվածությանը, և երբ լրացան իր հղության ինն ամիսները, ճշմարտապես ծնվեց [Նա], որ գոյության [կոչեց] Ադամին և իր ծննդյամբ արարածներին ազատեց գերողից: Եվ երբ կամենում էր Ադամին արձանագրել կյանքի գրքում, հրաման եղավ՝ մարդկանց արձանագրել մարդահամարի մեջ: Երկու թագավորների՝ երկնավորի և երկրավորի հրամանները մեկմեկու հանդիպեցին. կայսրը արձանագրում էր մարդկանց՝ իրեն հարկ տալու համար, և Աստուծո Որդին արձանագրում էր ադամորդիներին կյանքի դպրության մեջ: Առաջին թագավորը մտածում էր մարդկանց պարտական դարձնել իրեն, և մյուսը՝ ողորմում ու ազատում պարտապաններին պարտքերից: Այն մարդահամարն առաջին անգամ էր և՝ նոր, և մյուսը՝ հին և նոր փրկական ազատություն էր, որ եղավ մեզ համար: Արտաքին բաներով պատկերվում էին քողարկվածները և երկրավորներով գուշակվում երկնավորները: Հրաման ելավ, և յուրաքանչյուր ոք արձանագրվում էր իր բնակավայրում, և Ադամին արձանագրեցին Եդեմում, քանզի այն է նրա բնակավայրը: Իր Տերը նրան արձանագրեց փափուկ դրախտում և մեծ քաղաքում, իբրև սկզբնական բնակավայր՝ իր ծանոթների մեջ, այնտեղ պատվեց նրան: Եվ երբ կայսրը հրամայեց՝ յուրաքանչյուրին արձանագրվել իր բնակավայրում, այն հասավ նաև Հովսեփին, որպեսզի դուրս գա՝ իր անունը արձանագրելու Դավթի քաղաքում: Եվ նա Մարիամին առնելով գնաց Բեթղեհեմ[36]: Մարիամը կրում էր Թագավորին, և գնում էր թագավորների քաղաքը[37], որպեսզի ծնի նրան, որն Իր հայտնությամբ մարդկանց արձանագրելու էր Կյանքի դպրության մեջ: Երբ նրանք եկան Դավթի քաղաք Եփրաթա, Աստվածամայր Կույսի ծննդաբերելու երկունքը վրա հասավ: Եվ քանի որ Բեթղեհեմում նրանց համար իջևանելու տուն չկար, նրանք մեկուսանալով քարափոր տան՝ քարայրի մեջ, այնտեղ իջևանեցին: Հարուստը իջևանեց աղքատների մոտ դատարկ տան մեջ, հզորը՝ տառապյալների մոտ ժայռի ծերպում, ծնվելու ժամանակ Իր Մորը նեղեց երկունքի ցավերի մեջ[38], որպեսզի չկարծեն, թե սուրբ Կույսը միայն հոգի ծնեց. ստերջ ոչխարը ծնեց առյուծի Կորյունին՝ զորությունների Հզորին, որին ակնարկեց Հակոբը իր օրհնության մեջ[39]: Ընդարմացավ ամբիծ աղավնին և հանեց երիտասարդ ձագին՝ թռչունների թագավորին, փոքրիկ բույնի մեջ: Երինջը բազմեց՝ կուսությամբ ծնելու համար պարարտ եզին, որ եկավ ողջակեզ լինելու մեղավորներին: Իր Անձը մարմնապես ծնեց մանուկների Ստեղծիչը, ելավ որովայնից, և անխաթար մնաց կուսության կնիքը:

---

36 *Դկ. Բ 3-4:*

37 *Նկատի ունի Բեթղեհեմը, որ Դավիթ արքայի քաղաքն էր:*

38 *Ներբողի հրատարակիչները ծանուցում են, թե Տիրամոր երկունքի ցավերը ոչ թե հասարակ ծննդկանուհիներին վիճակված ցավերի նման էին, այլ՝ կուսական ծննդյան համար կանխասահմանված աստվածաորաշ եղանակով ու խորհրդով:*

39 *Տե՛ս Ծննդ. ԽԹ 9:*

Նրա ծնունդը աստվածային և մարդկային է և չի բաժանվում. քանզի վեր է պատճառաբանումից: Աստվածային է, որովհետև Կույսից ծնվեց անհասանելին, և մարդկային՝ որովհետև մարմնացած ծնվեց անքննելին: Միածին Որդու ծնունդը մի է. կատարյալ, բովանդակ, երևելի, սքանչելի, տեսանելի, իմանալի: Հորից է ծնված, հրեշտակներին՝ անտեսանելի, մարդկանց՝ երկրպագելի, էությունից և մարդկությունից. նույն Միածինը՝ մեծությունից և փոքրությունից, նույն Փրկիչը՝ Բարձրյալից և Կույսից, նույն Ջորավորը՝ հրեղեններից և հողեղեններից: Նույն Ամենակալը ծածուկ է էությամբ և հայտնի՝ մարդկությամբ: Եվ ո՞վ կհանդգնի քննել նրան. անծանոթ է [Իր] բնությամբ և ճշմարիտ՝ մարդեղությամբ: Եվ ո՞վ կհամարձակվի զննել Նրան. լույս է հագել և [սակայն] պատվել խանձարուրով: Եվ ո՞վ սահման կդնի Նրան. բազմել է Փառքի Աթոռին և [սակայն] դրվել անասունների մսուրի մեջ: Եվ ո՞վ կկարողանա իմանալ Նրան. դողացնել է տալիս Քերովբեներին և [սակայն] հագել է մարմին: Եվ ո՞վ կպատմի նրա մասին. շարժում է բանական անիվները[40] և [սակայն] բազմել է Մարիամի գրկում: Եվ ո՞վ կխոսի Նրա մասին. տոհմեր է հագեցնում և [սակայն] կերակրվում կաթով: Եվ ո՞վ է տեղյակ Նրանից. փառավորվում է Քերովբեական կառքում և [սակայն] նստում Մարիամի ծնկներին: Եվ ո՞վ կհասկանա Նրան. զարհուրեցնում է Սերովբեներին և [սակայն] հանձն է առնում աղքատությունը: Եվ ահա՛ մեծ զարմանք է. անձրև է թխեցնում և [սակայն] բռնել է ստինքները: Եվ ահա [մեծ] հիացք է. որոտում է երկնքում, ու սարսափում են Ջորությունները, և [սակայն] գգվում է Մորից. և սա սքանչելի է: Հրեշտակները քողարկվում են, և [սակայն] Հովսեփը համարձակ երկրպագում է. այս շնորհ է: [Վերին] դասերը օրհներգում են, ու մարդիկ՝ փառաբանում. և այս խոնարհություն է: Օրհնեցին Քերովբեները, սրբաբանեցին Սերովբեները, գովեցին հրեշտակները, բարեբանեցին իշխանությունները, փառաբանեցին Պետությունները, գոչեցին զորագնդերը: Հավաքվեցին լեգեոնները և երկիր իջան: Փայլեցին հրեղենները, շնչեցին հոգեղենները, նորածին Արքային նոր օրհնություն երգեցին հազարավորներն ու բյուրավորները: Երկնավորների ձայնից դղրդում էր անապատը, և հրեշտակների փայլը ճեղքում գիշերը: Կրակի կայծակները բորբոքվեցին և պաշարեցին քաղաքը, ծագեցին լույսի ճառագայթները, և խավարը նվաղեց: Իջան վերին զորքերը և երկիրը երկինք դարձրին, խառնվեցին վերիններն ու ստորինները և փառաբանության պսակ մատուցեցին մեծ Թագավորին: Գաբրիելյանները ավետարանեցին ադամյաններին, թե զարթնեք և սովորեք նոր օրհնություն: Քաղցրաձայն եղանակներով բարբառեցին Միքայել [հրեշտակապետի] զորականները և մարդկանց սովորեցրին իրենց օրհնության երգերը: Քերովբեների օրհնության ձայնը զորությամբ հնչեց, որպեսզի բացվեն մարդկանց խցված բերանները փառաբանության համար: Սերովբեների սրբասացությունը հնչեց իբրև քաղցրաձայն փող, որպեսզի քնից արթնացնի մարդկանց որդիներին: Օրջան կազմեցին երկնքի Ջորություններն իրենց քնարներով և ասացին. «Փառք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն» և հաջտության մեծ հույս Ադամին:

Հրեշտակներն ընթանալով՝ հովիվներին ավետարանեցին, թե եկել է քաջ Հովվապետը՝ ժողովելու Իր ցրված բանական խաշներին: «Ձեզ մեծ ուրախու-

---

40 *Նկատի ունի Եզեկիելի Տեսիլքում /Ժ/ Աստվածությունը կրող կառքի անիվները:*

թյուն ենք ավետում, որովհետև այսօր ձեզ Փրկիչ ծնվեց, Օծյալ Տեր Դավթի քաղաքում»[41]: Նա է Փրկիչը, որ բոնավորի ձեռքից հափշտակում է գերությունը և ազատում կապվածներին խավարային կապանքներից: Նա է Հզորը, որն Իր սպանվելով վերադարձնում է ավարը և չարչարանքով հաղթում թշնամուն և հալածչին: Ինչո՞ւ եք լռել, ո՛վ մարդիկ, քանզի եկել ձեր Թագավորը, գնացեք-տեսեք և երկրպագեք Նրան: Հեզ է և խոնարհ և չունի իշխանի փառավորություն: Նրա ձեռքին սուր և վահան չկա ռազմիկի նման, և զարդարուն կառք չկա Նրա տակ: Չունի ձի և ջորի, բայց Թագավոր է, չունի արագընթաց երիվար, բայց Իշխան է: Նրան կգտնեք խանձարուրի մեջ փաթաթված և մսուրի մեջ դրված, և մի երկբայեք Նրա աղքատիկ կերպարանքի վրա:

Հովիվներն իրենց խաշներով ցնծացին բարի լուրով, և հավատացին անարատներն ու, վերցնելով ընծաները, գնացին Նրա մոտ: Արդարներն ընտրեցին, ուղիղները տասանորդեցին և մատուցեցին իրենց ընծաները. գառ՝ իբրև Քահանայի, կաթ՝ իբրև Ծնկերի, փառք՝ իբրև Աստուծո: Առաջին ընծաները հովիվները մատուցեցին Նրան. իրենց պարգևներով մտան քարայր և երկրպագեցին Նրան: Մաքի գառը մատուցեցին Աստուծո Գառանը, որ եկավ զոհ և պատարագ լինել Աստուծո և դադարեցնել գառների զոհաբերությունը: Հովիվները խառնվեցին հրեշտակներին և փառաբանեցին Նրան: Մեծ հրաշքներ եղան, որովհետև երկնավորների ձայնը միավորվեց երկրավորներիս [ձայնին] և անմարմինների մեղեդիները՝ մարմնավորներիս [մեղեդիներին]: Եվ բոլոր բերանների փառաբանություն դուրս եկավ, ու միաբանվեցին երկինքն ու երկիրը՝ երգելու օրհնությունը մեկ Միջնորդի, որ նրանց հաշտեցրեց Իր ծննդյամբ: Մանուկը լռում է, [երկնային] բազմությունները զարհուրում են, ձայները՝ բարձրանում, հրեշտակները՝ բարբառում, մարդիկ՝ զոհանում: Քարայրը փոքր է, մսուրն՝ աղքատիկ: Հովսեփը ուրախ է, Մարիամը՝ զարմացած, և Որդին՝ աղքատացած:

Իսկ Մարիամը տեսնելով այս հրաշքները՝ քաջալերելով ինքն իրեն և խուսափելով երկունքից ու ցավերից՝ իր Որդու առջև ոտքի կանգնելով և խոնարհվելով՝ երկրպագում էր, Նրա առջև ընկնելով աղոթում էր ծնողական սիրով և ասում. Տեր իմ և Որդի, հրամայիր Քո աղախնին և Մորը՝ խոսել Քեզ հետ: Արձակիր բանակներդ Քո երկիրը, որովհետև այնտեղ ես: Սաստիր հրեշտակներիդ, որպեսզի տեղ տան Քեզ մոտենալու: Ասա Սերովբեներին՝ բարձրացնելու իրենց թևերը՝ ինձ Քեզ մոտ գալու համար: Թույլ տուր կուսական կաթին՝ հասնելու Քո բերանը, շնորհիր ստինքներիս, որոնց սնուցեցիր, որպեսզի սրանք սնուցեն Քեզ: Երկնավորների գոչյունից պատվեց երկիրը, հրամայիր նրանց հավաքվել բարձունքների լուսեղեն առագաստներում: Տուր իմ ձեռքերին Քերովբեների զորությունը, որպեսզի կարող լինեն [նրանց] թևերի նման բարձրացնել Քեզ: Պարգևիր իմ լեզվին Սերովբեների սրբասացությունը, որպեսզի բերանս անդադար Քեզ սրբասացություն երգի: Տուր իմ ծնկներին բանական անիվների տոկունություն[42], որպեսզի կարող լինեն շարժել Քո մեծությունը: Տուր ինձ զորություն, քանզի անկար եմ զորությանդ [առջև]: Եվ Դու Քեզ պատվիր, քանզի երկինքն իսկ անկարող է իր մեջ տեղավորել Քեզ: Քո մեծ ծննդյան այս օրը թող ցնծա բովանդակ երկիրը և փոխանակ փշերի՝ թող բարի պտուղ բուսնի:

Այսօր թող ուրախ լինի [մարդկանց] տոհմի նախահայր Ադամը, որովհետև Աստծուն ընդունեց իր ծննդից [ի վեր], ինչպես ցանկացավ:

---

41 *Ղկ. Բ 14:*

42 *Տե՛ս Ծննդ. 41:*

Այսօր Եվան ցնծալու է Ադամից առավել, որովհետև նրանից Մանուկ ծնվեց, որ վերացրեց նրա անեծքի ցավը: Այսօր դրախտն իր ծառերով պետք է ուրախ լինի, քանզի որոշված դրախտապանը վերադարձավ Իր ժառանգությանը:

Այսօր ցնծալու են բոլոր հեթանոսները, որ ցրված են բովանդակ երկրով մեկ, որպեսզի Քեզնով ժողովվեն:

Այսօր Հեսսեի[43] արմատից պտղատու ոստ բուսեց, որ քաղցր գինով պիտի հագեցնի ծարաված հեթանոսներին:

Այսօր ամրացավ փշրված ոտքը, և զորացավ տկարացած գարշապարը:

Այսօր հեթանոսները գերությունից խաղաղությամբ վերադարձան, և ամուլը բազմածնունդ եղավ:

Այսօր մարգարեների գնդերը ուրախանալու են, որովհետև կատարվեցին նրանց խոսքերը Քո ծննդյան մասին:

Այսօր Քո Դավիթ հայրը պատրաստելու է իր տաղանդի [քնարի] լարերը և երգելու Քո ծննդյան նոր երգերը:

Այսօր Եսայուն ձայն հնչեց իր գերեզմանում, քանզի աճավասիկ իմ առջև է Էմմանվելը, ինչպես մարգարեացավ[44]:

Այսօր փառավորվելու է Ամովսի որդին[45], քանզի Մանուկ ծնեցի և կույս մնացի, ինչպես գրված է:

Այսօր ավելի ևս ցնծալու է Զաքարիա մարգարեն, քանզի դու ես [այն] մարդը, որի անունը Ծառավիղ է[46], ինչպես ասաց:

Այսօր Քո լույսը ծագելու է մարգարեների գերեզմաններում և նրանց զարթնեցնելու է իրենց [իսկ] փառավորյալ քնարներով:

Այսօր ուրախանում է Քեզ [համար] հայր հորջորջված Հովսեփը, որ բազմիցս նախատվեց հանուն Քեզ և արժանի եղավ տեսնելու Քո փառքը:

Այսօր, երբ ծնեցի Քեզ, բազմացավ Քո փառաբանությունը, քանզի երկնայինները ու երկրավորները նոր օրհնություն երգեցին:

Այսօր Մարիամը երգեց այսպիսի խոսքեր, ամբիծ աղավնին՝ իր սիրելի Որդուն, և նրա գգվանքի ձայնը միավորեց հրեղեն [էակների] երգերին: Նրա խոսքը խառնվեց Սերովբեների սրբասացությանն հետ, և նրա եղանակը խլացրեց բոցեղեն [էակների] որոտմանը, որովհետև գորովանքով էր օրհնաբանում իր սիրելի Որդուն: Կուսության քնարը գոչեց՝ միավորված հրեշտակների հետ, քանզի նրանց հաղորդակից էր կուսությամբ և սրբությամբ: Նորոգվեց հողը[47], որ հնացած էր մեղքով, և վերստին ստեղծվեց Աստուծո Որդու ծնունդով: Այսօրվա փառքը մեծ է [մնացյալ] բոլոր օրերից, և հրաշալի է այս Տոնի պայծառությունը, քան [մնացյալ] բոլոր տոների:

Եկեղեցի, արթնացիր գեղեցկազարդ քո երգերով և օրհնության պատարագ մատուցիր քո Տիրոջը Նրա ծննդյան օրը:

Այսօր ելնում է Սիոնը և մտնում հեթանոսների եկեղեցի, և բարձրանում է նրա զավակի խոնարհված գլուխը:

Այսօր հարսնացած եկեղեցին ուրախանում է Փեսայի տունդարձով, որովհետև թողել էր նրան և գնացել դիվամոլ կռապաշտության հետևից:

---

43 *Հայրն է Դավիթ մարգարեի /Հռութ. Դ 17, Ա Թագ. ԺԶ. ԺԷ 12, ԻԲ 3, Մտթ. Ա 5/, որի շառավիղն էր Հիսուս:*

44 *Տե՛ս Եսայի Է 14:*

45 *Նկատի ունի Եսայի մարգարեին, որ որդին էր Ամովսի. Եսայի ԼԷ 2:*

46 *Զաքարիա Զ 12:*

47 *Նկատի ունի աղամորդուն. Ծննդ. Ա:*

Այսօր ցնծում է վաղուց վշտացածը, քանզի Փեսան եկել է նրան հանելու դևերի խավարային մոլորությունից:

Այսօր գոհ է բոնավորի կապանքներով կապվածը, որովհետև Ազատիչը գալով խորտակեց անգիտության կապանքները և ազատեց նրան:

Այսօր Ստեղծիչը վերստին նկարակերտեց իր ապականված պատկերը և նրան խառնեց անմահության դեղը, որպեսզի այլևս չեղծվի հավիտյան:

Այսօր իմաստուն Տաճարապետը շինեց ավերված տունը և նրա մեջ ամրացրեց աստվածային անդրդվելի սյուն:

Այսօր Տերը հաշտվեց Ադամի հետ, որպեսզի Որդին, որ ծնվեց, խաղաղություն հաստատի Հոր և Ադամի միջև:

Այսօր Տերը գտավ մոլորյալ ոչխարին և ուսերի վրա դնելով բերեց Եդեմ դրախտը:

Այսօր վերադարձան հեթանոսների հոտերը, քանզի քաջ Հովիվը հալածեց ապականիչ գայլերին և փրկեց նրանց:

Այսօր արտաքինները ներքին դարձան, և մերձավորները խորվքի մատնվելով դուրս եկան Թագավորի տնից[48]:

Այսօր Սաբավոթ Տերն իջնելով՝ կործանեց մեհյանները և նրանց միջից վերացրեց աստվածների անունը:

Այսօր աշխարհի գերության [ժամին] հայտնվեց հզոր Պատերազմողը, որ կապեց ապստամբ գերողին և Իր զորությամբ վերացրեց գերությունը:

Այսօր եկել է հիվանդների և վիրավորների Բժիշկը, որ ձրի բժշկում և ապաքինում է, և դարձյալ Ինքը վարձ է տալիս ապաքինվածներին:

Այսօր Կինը խառնեց կյանքի խմորը մեր զանգվածին,[49] մինչև որ ամբողջը խմորվեց, քանզի մարդկային ցեղը զրկվել էր աստվածային գիտությունից:

Այսօր կենդանի Աղը, իջնելով Բարձրյալից, համեմեց մեր անհամությունը՝ համաձայն Եղիսեի խոսքի[50]:

Այսօր Հորից դուրս եկած հրամանը կյանքի առհավատչյա է, քանզի Որդու ծննդով վեր հրավիրեց մարդկային ցեղը:

Այսօր, որ ամիս է առանց պտուղի, կյանքի Պտուղ մեզ առաքվեց երկնավորից:

Այս ամիս, որ զուրկ է ամեն տեսակ եկամուտից, մեզ առաքվեց կյանքի Ցորնախուրձը և հագեցրեց մեզ:

Այս ամիս, երբ աղքատանում են բոլոր տառապյալները, իջավ հարուստը և Իր գանձերը բաշխեց բոլոր տնանկներին:

Այս ամիս, երբ այլևս զուրկ է խաղողից, կույս որթը իր արգանդից մեզ Ողկույզ պարգևեց:

Այս ամիս, երբ տերևները թափվում են ծառերից, Ադամի տերևները դարձան լուսեղեն զգեստներ:

---

48 *Նկատի ունի հեթանոսներին /արտաքիններ/, որոնք Քրիստոսին ընդունելով դարձան քրիստոնեական ընտանիքի լիիրավ անդամ /ներքին/: Մինչդեռ այդ ընտանիքի անդամության կոչվածները /մերձավորները/ անարժան գտնվելով՝ դուրս մնացին Քրիստոսի /Թագավորի/ թագավորությունից /տնից/:*

49 *Պատկերը կառուցված է կին = կյանք (Ծննդ. Գ 20) զուգորդական հիման վրա, ուր կյանքն իբրև բացարձակ արժեք մատնանշում է Հիսուս Քրիստոսի անդրանձնական էությունը (Հովհ. ԺԱ 25), որի հետ միավորվելով աղամորդին դառնում է կյանքտ ժառանգորդ:*

50 *Տե՛ս Դ Թագ. ԻԲ 20-22:*

Այս ամիս, երբ սերմերը պատվում են սառնամանիքով, մեզ բարի Սերմ տրվեց ծարավ և անաշխատ հողից:

Այս ամիս, երբ հողը զրկվում է բարիքից, մեր հոգիներին առաքվեց երկնավոր Բարիքը:

Այս ամիս, երբ արեգակը բարձրանում է լույսի սանդուղքով, ծագեց արդարության Արեգակը և լուսավորեց մեզ:

Այս ամիս, երբ տեղի է տալիս խավարը և ետ դառնում, քանզի հաղթվում է լույսից, չարը պարտվում է և ետ դառնում, ընկնում իր իշխանությունից:

Այս ամիս, երբ նվազում է գիշերը ու պակասում, և աճում առավոտը, նվազեցին թակարդներն ու որոգայթները մարդկանցից:

Այս ամիս, երբ խավարը պարտավորվում է լույսից, խավարի իշխանությունը պարտավորվեց անեղ Լույսից:

Այս ամիս, երբ ընտինքյան նորոգվում են հնացածները, մեր Տերը սրա մեջ նորոգեց առաջիններին:

Այս ամիս, երբ թագավորները նոր հրամաններ են տալիս, մեծ Թագավորից հրաման ելավ երկրի խաղաղության համար:

Այս Տոնին, երբ հրեշտակները երգեցին իրենց գոչումով, հեթանոսներն իրենց հատուկ բազմությամբ գոհանում են ովսաննաներով:

Այս տոնին, որ սպասավորվեց երկնավորներից, երկրավորներիս կողմից պաշտվում և երկրպագվում է ծնված Աստվածը:

Այս տոնին երգեցի Քո ծննդյան փառաբանությունը՝ Քո՝ Անեղիդ օրը տեսնելու Աստվածությանդ ողորմությունը:

Այս առավոտ սակավ խոսքերով օրհնեցի Քեզ. արժանի արա ինձ մեծ առավոտյան Քեզ անսպառ օրհնել:

Այս առավոտ Քո եկեղեցում իմ ձայնի պատարագը մատուցեցի. հավիտենական ավոտին ինձ դասիր Քո առագաստին հրավիրվածների շարքը[51]:

Այս առավոտ Քո Հորը՝ փառաբանություն, Քեզ՝ անդադար օրհնություն, և Սուրբ Հոգուն՝ երկրպագություն, և մեզ՝ հավատացյալներիս՝ ողորմություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Աշխարհաբարի վերածեց
և ծանոթագրեց

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԸ

---

51 *Հմմտ. Մտթ. ԻԲ 2-14:*